ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2011 թվականի թիվ 79 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 991-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1748-Ն որոշման 5.13-րդ կետով՝

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքային համայնքի Իջևանյան և Ասլանյան փողոցների վերանորոգման աշխատանքների իրականացման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության /վարչության պետ՝ Վ.Սարգսյան/ վրա:
2. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /վարչության պետ՝ Ռ. Ներսեսյան/ համայնքին սուբվենցիայի հերթական մասնաբաժինը տրամադրել հսկողություն իրականացնող՝ մարզպետարանի աշխատակազմի վարչության /վարչության պետ՝ Վ.Սարգսյան/ դրական եզրակացությունից հետո:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի տեղակալ Լ. Սարգսյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011 թ. հուլիսի 27
ք. Իջևան